

Կորիզները հանում և դրանով տրորում են հիւանդի մարմինը և աշխատում են դրանով քրտնցնել:

Քամած մածուն են քսում մարմնին:

Ուռենու կանաչ ճիւղերը ջրի մէջ եփում են և հիւանդին լողացնում այդ ջրով:

Տրիպերի ժամանակ մեծ քանակութեամբ ձմերուկ են ուտում, որպէսզի շատ միզեն:

Ցրտի տարած.—Փսորած կաթը քաշախի հետ խառնելով քսում են շորի վրայ և դնում ցրտի տարած մասերի վրայ:

Քարի խինան թրջելով դնում են ցրտի տարած տեղը:

Փորլուծութիւն.—Սև թաղիքի կտորը թրջելով ղաթրանի (մազուտ) մէջ՝ դնում են նստատեղի անցքում և ժամը մի անգամ փոխում:

Թերխորով ձուն կխտորի (чернильные орѣшки) փոշու հետ խառնելով ուտեցնում են:

Պինդ եփած ձու են ուտում:

Փորացաւ.—Պղպեղը օղիի մէջ ածում, խմում են: Կինեմոնը, պղպեղը և զանձաֆիլը ջրով եփում են և խմում:

Քոս. (парашъ). Կաւը տափակացնում են, վառարանում կարմրացնում և դնում են գլխի քոսերի վրայ:

Գոմէշի մածնի մէջ ծծումբի փոշի խառնելով՝ ուտեցնում են, յետոյ հինգ մաս խոզի ճարպի մէջ լուծում են մի մաս սնդիկ և սրանով օծում քոսոտի մարմինը և անմիջապէս տաք թոնրի մէջ իջեցնում և այնտեղ մի քիչ պահելուց յետոյ լողացնում:

Քրտինք բերելու.—Քրտինք բերելու համար գործ են ածում մանուշակի ծաղիկներից պատրաստուած թէյ, կամ նրանից և բընձից եփած արգանակի: Եւ կամ խունը բոյսից պատրաստուած թէյ:

Օձի կծած.—Մեծ քանակութեամբ կովի կաթ են խմացնում:

Վառած աբեթով այրում են կծուած տեղը:

Հրաշէկ երկաթով այրում (բաշ-բաշ) են կծուած տեղը:

ՄԱՀ, ԹԱՂԱԽՄՆ ԵՒ ՄԵԽԵԼՈՅ

Զանգեզուրի ժողովորդն էլ խոր համոզուած է, որ մարդու ճակատին գրուած է նաև նրա մահուան օրը: Նա հաւատում է, որ ոչ մի հանդամանք, ոչ մի միջոց չեն կարող փո-

խել այդ նշանակուած ժամը, ուստի և մեծ մասամբ անխնամ, ճակատագրի բախտին է թողնում հիւանդին:

Երբ հոգեւարքի ըոպէն հասնում է՝ ամենայն փութով կանչում են քահանալին, որ հաղորդութիւն տայ: Յետոյ վերցնում են բարձերը, որպէսզի հոգին հեշտութեամբ աւանդէ: Եւ մինչդեռ շրջապատողները լաց են լինում՝ աւելի սրտոտ մէկը փակում է մեռնողի աչքերը. իսկ եթէ աչքերը բաց են մնում՝ ցեխ են քսում: Յետոյ ձեռքերը խաչաձև դնում են կրծքին և մի թաշկինակ կապում կզակովը, որպէսզի բերանը չբացուի: Պտների բթամատներն էլ բամբակի թելով կապում են: Ապա դարձնում են դէպի արևելք և մի շոր ձգում վերան:

Այս ժամանակ հաւաքւում են ազգականները, լաց լինում և միսիթարում մօտիկներին: Հրաւիրւում է քահանան, որ օրհնում է ջուրն ու պատանը: Ննջեցեալին լողացնում են հարեւանները, եթէ տղամարդ է՝ տղամարդիկ, իսկ եթէ կին՝ կանայք, ձմեռը սենեակում, իսկ ամառը դուրսը՝ կապերտներով մի անկիւն շրջափակելով: Տաշտի երեսին մի տախտակ են դրնում և սրա վրայ երկարացնում ննջեցեալին, երեսը դէպի արևելք դարձրած: Երկու հոգի, ձեռներին քսակներ անցկացրած, «Աստուած հոգին լուսաւորէ» ասելով՝ լուանում են նախ զլուխը, յետոյ կուրծքը, մէջը և ապա աջ և ձախ ոտերը: Աելացած ջուրը թափում են և ամանը կոտրում: Յետոյ, եթէ ննջեցեալը երեխայ է՝ ձեռին մոմ են տալիս, որովհետեւ «նալուսի պէս մաքուր է»: Եթէ չափահաս և հարուստ է ննջեցեալը՝ շապիկ և վարտիկ են հագցնում, շապկի վրայից, գոտուտեղը բամբակի թել կապում և ապա պատանքում. իսկ եթէ աղքատ է՝ ուղղակի հասարակ կտաւից պատանք են կարում և պատնքում: Ճատ հարուստները դագաղ են պատուիրում, իսկ միւսներն ընդհանրապէս բերել են տալիս եկեղեցու նաֆը և ննջեցեալին կապերտի մէջ փաթաթած դնում նրա մէջ: Զէլվացիները, իրենց գիւղում եկեղեցի չունենալով և դէպի ծիծեռնուվանք տանող ճանապարհը սաստիկ վատ լինելով նաֆի փոխարէն երկու ձող են դորձածում, որոնց մէջ մի թոկ է կապկապուած և վերան մի կապերտ ձգուած: Ննջեցեալը նոյն-

ալէս կապերտի մէջ գիաթաթած՝ դնում են այդ ձողերի մէջ և կապում, ապա ուսերին առնում և տանում Ծիծեռնալանք, մի ժամից աւելի քաղելով։ Թէ դադաղի և թէ նաժի երեսին դիւազարդ (Երեսիած) են ձգում, որ երիտասարդի համար կարմիր գիւղի չժից է լինում, միջահասակինը՝ սպիտակախառն, սևագոյն կտորից, իսկ ծերինը՝ լասիկի շարժ—սև կտորներից։ Հարուստ ննջեցեալին միքանի օր տանը պահում են և ապա եկեղեցի տանում, իսկ աղքատին իսկոյն և եթ ժաղում են, առանց նոյնիսկ եկեղեցի տանելու։

Ննջեցեալին տնից վերցնելիս նրա տեղում մի քար են դնում, որպէսզի նրա լիշտակը հաստատուն մնայ այդ տնում։ Գրեթէ բոլոր զիւղերում կան յայտնի լալիան կանալք, որոնք հրաւիրում են ննջեցեալների վրայ լաց լինելու։ Սրանք թէ տանը և թէ եկեղեցում, շրջապատած ննջեցեալին լալիս են և բարձրածայն՝ երգելով թւում նրա զործերը, գոյլում նրա վարք ու բարքը։ Սովորաբար մօտիկներից մին «մարը ողբոց» է դառնում, նատում է ննջեցեալի սնարքի մօտ, լալիս և երգում, իսկ միւսները կոկնում են նրա ասածները։

Կանալք ուղեկցում են ննջեցեալին մինչև եկեղեցի։ Եթէ ննջեցեալը նշանազրուած երիտասարդ է եղել՝ եկեղեցի են բերում նաև նրա հարմացուին, զլիխն սև շարաւ ձած։ Լալկան կանալք վերցնում են նշանի մատանին և նշանազրութեան ժամանակ տրուած եալի ապասիները, որոնք մի սև թելի վերայ են անցկացրած՝ լալով ու երգելով՝ երիտասարդի կողմից մնասքարով են ասում հարմացուին։

Երբ քահանան սկսում է զանձ ասել և մի քանի կոպէկ հաւաքել՝ այն ժամանակ կանալք փաթաթւում են ննջեցեալին և աւելի սաստիկ լալիս։ Ննջեցեալի մարը, քոյրը պատառատում են իրենց երեսները, քանգում, քաշում մազերը, թակում զլուխները, ուշագնաց լինում։

Վերջապէս գաղաղը կանանց ձեռքից աղատելով տանում են դէպի գերեզմանատուն, իսկ կանալք եկեղեցու դռանն էլ միքիչ սուգ անելուց յատոյ վերադառնում են տուն։ Այսոեղ ննջեցեալի շորերը առաջ են բերում, հոտոտում, լալիս և սուգ

ասում։ Երբ արդէն յագենում են լացից՝ ապա լուացւում են, հաց ուտում և ցրւում, իսկ ամենամօտ աղդականները մնում են զիշերելու։

«Ննջեցեալը տղամարդկանց լուղարկաւորութեամբ տարւում է դէպի գերեզմանատուն։ Մարդիկ շուտ-շուտ փոխարինում են դագաղը կրողներին, ամէն անգամ «Աստուած ննջեցելոց հոգիք լուսաւորէ» կրկնելով։ Կէս ճանապարհին վայր են դնում դագաղը, մի անգամ էլ գանձ ասում, միքանի կոպէկ յօգուտ քահանայի հաւաքում և ապա, «Աստուած ողորմի ննջեցելոց հոգուն» աշելով՝ երեք անգամ դագաղը փոքր ինչ բարձրացնում, դնում են գետնին և ապա վերցնում, տանում են գերեզմանատուն և դնում գերեզմանի աջ կողմը։ Սովորաբար գերեզմանները փորում են աղգական կամ հարեան մարդիկ։ Գերեզմանատունը լինում է գիւղից փոքր ինչ հեռու, շատ անգամ մի բլրակի վրայ։ Գերեզմանի լայնութիւնը լինում է մի արշին, իսկ խորութիւնը՝ 2-3 արշին։

«Ննջեցեալին հանում են նաժի միջից, փոքրիկ կտաւի բարձը դնում գերեզմանի մէջ և ապա մինը իջնելով գերեզմանի մէջ՝ զրկում է ննջեցեալին և պառկեցնում գերեզմանի մէջ։ Այս ժամանակ քահանան օրհնում է միքիչ հող աղգականներից ամենամօտի բոլի մէջ և ձգում է դիակի վրայ։ Այս ժամանակ բոլոր լուղարկաւորողներն էլ մի-մի բուռ հող են ձգում գերեզմանի մէջ, իսկ գերեզման փորողները լցնում են գերեզմանը հողով, վերան մի թումբ ձևացնելով։

Թաղման ծէսը վերջանալուց յետոյ՝ լուղարկաւորողները ոեղմում են ննջեցեալի մօտիկ աղգականների ձեռքերը և «Սուրբ Հոգով միիթարուէք» ասելով, ուղևորւում դէպի ննջեցեալի տունը «Ժմահաց» ուտելու։ Այս սովորութիւնը ամենայն խստութեամբ կատարւում է այս շրջանում դեռ մինչև ալժմ էլ։ Սովորաբար մի եղ, կամ միքանի ոչխար են մորթում, որից պատրաստում են մսըշիլա, իսկ հարուստները՝ նաև փլաւ։ Պասինձիթով ճաշ (փլաւ) և լորի։ Ճաշում են նախ տղամարդիկ և ապա կանայք լռելեալն և ճաշելուց յետոյ ցրւում են։

Հետևեալ օրը վաղ լուսաբացին ննջեցեալի աղգականներից

մինը գնում է գերեզմանատուն, համբուրում է գերեզմանը, երեք անգամ վայ բղաւում և վերադառնում տուն։ Այս միջոցին ազգական կանալք հաւաքւում են ննջեցեալի տունը, բերելով իրենց հետ ձու, պանիր, բրինձ, կերակրներ և այլն։ Այս բոլոր բերածները թողնելով տանը՝ գնում են գերեզմանատուն, քահանային «ալգը» կատարել տալիս, լալիս, օղի խմում, սուզասում։ Երբ մինի ուշքը գնում է՝ գերեզմանի հողից վերցնում ածում են վերան։ Վերջապէս վերադառնով տուն՝ հաց են ուտում և ցրւում։

Հիւրերի հեռանալուց յետոյ, տնեցիները ննջեցեալի շորերը լուանում են, որպէսզի «հոգին մաքուր և անարատ գնայ հասնի իւր տեղը»։

Այնուհետև եօթն օր շարունակ սգաւորները առաւօտ և եղեկոյ եկեղեցի են գնում, և ժամասացութիւնից յետոյ քահանային հոգոց ասել տալիս։ Եօթներորդ օրը, «եօթին», ննջեցեալի տէրը հրաւիրում է «ալգի» ժամանակ ուտելեղէններ բերող կանանց և նրանց հետ գնում գերեզմանատուն, «եօթը» կատարել տալիս և վերադառնում տուն, ճաշում։

Մի կամ միքանի օր անցած՝ նոյն կանալք կրկին հաւաքւում են սգաւորի տունը, լուանում նախ սգաւորի և ապա իրենց բոլորի գլուխները, ապա առաջ են բերում ննջեցեալի շորերը, յաց են լինում և ի վերջոյ այդ շորերը բաժանում են իրենց մէջ և ցրւում։

Այնուհետև մի տարուայ ընթացքում սգաւորի ազգականները, հարսանիք կամ նշանդրէք անելիս, «սըդահան» են բերում նրան մի զոյգ չմոշկ, մի քժակալ և այլն։ Իսկ մեռելոց օրերին օրհնել տալիս գերեզմանը և տարին մի անգամ ամէն գերդաստան իւր հին և նոր ննջեցեալների հոգու փրկութեան համար ժմահաց են տալիս։

ԹԱՂՄԱՆ ԴԱԽՍԵՐ

| | | | | |
|------------------------|---|---------------------|--------|-----------|
| Պատանքին | . | . | . | 50 կ—1 ր. |
| Լուսաղին եկեղեցուն | . | . | . | 50 կ—1 ր. |
| Քահանային | { | Մինչև 21 տար. | : | 20 կ—1 ր. |
| | { | Աւելի հասակաւորի *) | 1 ր — | —4 ր. |
| Ամբիջքին | . | . | . | 40 կ—1 ր. |
| Խաշհամբոց՝ գանձ ասելիս | . | . | . | 50 կ—1 ր. |
| Ժմահացի և եօթնից հացի | . | . | 30 ր — | —45 ր. |

Ընդամենը 33,10 — 54 ր.

*) Տալիս են նաեւ դիազարդը